# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 49 – Ա 04 փետրվարի 2022 թ.

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթով

որոշում եմ՝

1. Մինչև Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ավագանու առաջին նիստի իրավազորության վերաբերյալ դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելը՝ Վարդենիս համայնքում աշխատանքների բնականոն ընթացքը չխաթարելու նպատակով Վարդենիս համայնքի ղեկավարի կնիքը, համայնքի ղեկավարին ամրացված շարժական ու անշարժ գույքը և աշխատասենյակի բանալիները նախկին համայնքի ղեկավարից ստանալու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

| | |
|---|---|
| Հարությունյան Վանիկ | - մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, հանձնաժողովի նախագահ |
| Օհանյան Հրանդիկ | - մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ |
| Սարգսյան Նելսոն | - մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ |

2. Հանձնաժողովին՝ կատարված աշխատանքների վերաբերյալ Գեղարքունիքի մարզպետին ներկայացնել տեղեկատվություն:

04.02.2022

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

ՄԱՐԶՊԵՏ

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ